ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0215-23

Ձեռնարկողը՝ *«Ապրիում պրո ստուդիո» ՍՊԸ*
ք. Երևան, Բաղրամյան փ. 14/2

Գործունեությունը՝ *«Լոռի 8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն*
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 0215-23

<<30>> 11 2023թ.

«Լոռի 8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ատրիում պրո ստուդիո» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրութային փաստաթուղթ
Ներկայացված նյութեր՝	ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման /ՌԷԳ/ հաշվետվություն
Իրականացման վայրը՝	Լոռու մարզ

Ներածական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի /այսուհետ՝ ՄՄՀՏՊՓ/ հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիր իրականացմամբ:

Լոռու մարզի /այսուհետ՝ Մարզ/ «Լոռի 8» տարածաշրջանի միկրոռեգիոնալ /այսուհետ՝ Տարածաշրջան/ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը մշակվել է քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-*ԲՄԱՇՁԲ-22/8*)՝ տեխնիկական բնութագրին համապատասխան և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված Տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

ՄՄՀՏՊՓ նախագիծը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրութային փաստաթուղթ:

«Լոռի 8» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծի «Շրջակա միջավայրի բարելավման ու պահպանման միջոցառումներ» բաժինը մշակված է ՄՄՀՏՊՓ համապատասխան՝ հաշվի առնելով նշված համայնքների 2023-2027թթ. զարգացման ծրագրերը:

Նկարագրական մաս. Լոռու մարզը մարզի կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավոր է՝ 3799 քառ. կմ տարածքով, զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7%-ը և հանրապետության հյուսիսային մարզերից ամենամեծն է: Այն հանդիսանում է հանրապետության հյուսիսային դարպասը, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը՝ 110 կմ երկարությամբ, արևելքից՝ ՀՀ Տավուշի, արևմուտքից՝ ՀՀ Շիրակի, հարավից՝ ՀՀ Կոտայքի և Արագածոտնի մարզերին: Լոռու մարզով անցնում են Հայաստանը Վրաստանին կապող միջպետական նշանակության Մ-3 ավտոմայրուղին և հանրապետական նշանակության Հ-31 ճանապարհը: Մարզի ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 891.1 կմ, այդ թվում՝ միջպետական նշանակության՝ 218.9 կմ, հանրապետական նշանակության՝ 264.3 կմ, տեղական նշանակության՝ 407.9 կմ: Մարզի տարածքով է անցնում Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը: Երկաթուղու գլխավոր գծի երկարությունը կազմում է 107 կմ (հանրապետականի 14.7%-ը), որի վրա գտնվում են 12 գործող կայարաններ: Վերջերս երկաթուղու ենթակառուցվածքների որոշակի մասը նորոգվել է, որի շնորհիվ մեծացել է հուսալիության աստիճանը:

Մարզի վարչական կենտրոնը՝ Վանաձոր քաղաքը, գտնվում է Երևանից 125 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1350 մ է:

Մարզն իր մեջ ներառում է 8 քաղաքային և 105 գյուղական համայնք, 122 գյուղական բնակավայր: Մարզի ընդհանուր տարածքը 3789 կմ² է:

Մարզն ընդգրկում է նախկին Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի, Տաշիրի տարածաշրջանները: Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանն ամբողջությամբ, ունի ոչ հարթ ռելիեֆ, տարածքի մոտ 80%-ը զբաղեցնում են լեռնաշղթաները և խոշոր լեռները: Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը (154 կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ձորագետ, Մարցագետ և Փամբակ վտակներով: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային ջրերի աղբյուրներով:

Լոռու մարզում է գտնվում Լոռվա սարահարթը, Տաշիր գետի վրա Մեծավանի ջրամբարը: Մարզի տարածքով են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները և Լոռվա ձորը:

Մարզում գտնվում են Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում ներառված օբյեկտներից երկուսը՝ Հաղպատի ու Սանահինի միջնադարյան վանական համալիրները:

Մարզը հարուստ է անտառային և լեռնատափաստանային տարածքներով, ինչպես նաև մերձալպյան մարգագետիններով: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին: Անտառածածկ տարածքները ընդգրկում են Թումանյանի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները: Մարզում առկա են 3 արգելավայրեր («Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»), ընդհանուր՝ 17 576 հա մակերեսով, 1 բուսաբանական այգի և 2 դենդրոպարկ: Անձնագրավորված են 9 բնության հուշարձան՝ 165 հա ընդհանուր մակերեսով:

Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերն են սննդի, կաթի և կաթնամթերքի արտադրատեսակների արտադրությունը: Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար

հանածոներով, որոնք ներկայացված են հիմնականում ինտրուզիվ ծագման երեսապատման քարերով, ավազակոպճային խառնուրդով, բազալտներով, իսկ մետաղական հանածոներից են պղինձը, մոլիբդենը, ոսկին: Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 35 հանքավայրում:

Միկրոռեագիոնի տարածքում առկա են հետևյալ հանքավայրերը.

- Ուռուտի ԱԿԽ ավազակոպճային խառնուրդ
- Բովաձորի դոլերտային բազալտ
- Լոռի Բերդի դոլերտային բազալտ
- Կողեսի գաբրոսիենիտ
- Ագարակի դոլերտային բազալտ

Մարզը հարուստ է նաև հանքային ջրերի ելքերով, որոնք կարևոր տնտեսական նշանակություն ունեն: Լոռու մարզում է գտնվում Հայաստանի ամենաերկար ավտոտրանսպորտային թունելը, որն անցնում է Բազումի լեռնաշղթայի տակով և Ստեփանավան-Վանաձոր հիմնական ավտոերթուղու մաս է կազմում: Մարզի տարածքով է անցնում Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով:

Լոռու մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով՝ չափավոր ցուրտ, թույլ և միջին ուժգնությամբ քամիներով, բավական կայուն ու հաստ ձնածածկ շերտի գոյացումով: Ամառը տաք է և խոնավ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը -4.8°C-ից մինչև +18°C ամռանը: Այստեղ տեղումների քանակը բավականին մեծ է, տարեկան դիտարկվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Նախալեռնային գոտում կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով:

«Լոռի 8» տարածաշրջանը իր մեջ ներառում է Լոռի Բերդ, Ագարակ, Բովաձոր, Լեջան, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ (ընդամենը 9) գյուղական բնակավայրերը:

Տարածաշրջանը պատկանում է նախալեռնային շրջանին, բարձրությունը ծովի մակարդակից 1552 մետր է, ընդգրկում է 17041.52 հա տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 4988 մարդ: Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ:

Տարածաշրջանում ներառված համայնքների կենսաբազմազանությունը ձևավորվում է աշխարհագրական դիրքով, բնակլիմայական, ռելիեֆային, լանդշաֆտային և այլ պայմանների, ինչպես նաև կից տարածքների ֆլորիստական և ֆաունիստական ազդեցությունների ներքո:

«Լոռի 8» տարածաշրջանը գտնվում է Լոռի բուսաբանա-աշխարհագրական ֆլորիստական շրջանի հարավ-արևմտյան մասում, ցածր լեռնային չափավոր ցուրտ կլիմայով տարածք է, ինչով և պայմանավորված են բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկությունները:

Բուսական աշխարհը մերկայացված է Լոռու ֆլորիստական շրջանի անտառային գորշ, թույլ չհագեցած խճաքարային և սևահող կրազերծված խորքային կարբոնատային հողերի վրա զարգացած տափաստանային բուսականությամբ:

Այստեղ գրանցված են պահպանության կարիք ունեցող Կարմիր գրքում ընդգրկված ֆլորայի 327 տեսակ:

Դիտարկվող տարածաշրջանում հանդիպում են կենդանիներ, որոնց կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Կարմիր գրքում՝ գիշանգղ, տափաստանային արծիվ, քարարծիվ, փոքրասիական գետնասկյուռ, խայտաքիս և այլն: Այստեղ գրանցված են պահպանության կարիք ունեցող Կարմիր գրքում ընդգրկված ֆաունայի 13 տեսակ: Էնդեմիկ բեռյսերը և կենդանիները բացակայում են:

«Լոռի 8» տարածաշրջանի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը փաստացի 17041.52 հա այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ փաստացի 14596.3 հա, հեռանկարային՝ 14370.83հա,
- բնակավայրերի հողեր՝ փաստացի – 693.49 հա, հեռանկարային՝ 808.43 հա,
- արդյունաբերության՝ փաստացի 184.57 հա, հեռանկարային՝ 166.4613 հա,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի, հողեր փաստացի՝ 47.53 հա, հեռանկարային՝ 61.5187 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր փաստացի՝ 70.84 հա, հեռանկարային՝ 108.76 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ փաստացի 100.86 հա, հեռանկարում չի փոխվում,
- անտառային հողեր՝ փաստաց 1251.8հա, հեռանկարային՝1327.13,
- ջրային հողեր՝ փատացի 96.13 հա, հեռանկարային՝ 95.98 հա.
- պահուստային – 0 հա:

Մարզի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում արտացոլված են բնական պաշարների (ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության, տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների և կաթսայատների ճիշտ տեղադրման արդյունքները՝ անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ՝ կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Տարածաշրջանի գյուղական բնակավայրերում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ հիմնախնդիրներ, որոնք մանրամասն նկարագրված են նշված բնակավայրերի զարգացման ծրագրերում:

Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ գյուղմթերքի արտադրությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունը և առևտուրը:

«Լոռի 8» տարածաշրջանի համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Համաձայն հաշվետվության՝ համայնքների հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր, աղտոտվածության դասը՝ թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար:

Ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող միկրոռեգիոնի Լոռի բերդ, Ագարակ, Կողես, Յաղդան, Ուռուտ բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է մեծածախ եղանակով: Նշված բնակավայրերի ներքին ցանցերն ունեն փոխարինման և հիմնանորոգման կարիք: 2023-2024թթ. Գերմանական վերակառուցման բանկի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում կիրականացվի Ագարակ և Ուռուտ բանակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ամբողջական կառուցում: Բովաձոր, Լեջան, Հովնանաձոր, Սվերդլով բնակավայրերի ջրամատակարարման սպասարկումը իրականացվում է համայնքի կողմից:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ ընդունվել է 200 լ/օր/մարդ : Սույն նորմն ընդգրկում է գյուղական բնակչության խմելու-կենցաղային ջրապահանջը (150 լ/օր /ըստ ՇՆևԿ 2.04.02.84/:

Դիտարկվող միկրոռեգիոնի բնակավայրերը չունեն կոյուղու մաքրման կայան: Բնակավայրերի բնակչությունն օգտվում են բակային հորատիպ զուգարաններից: Նախագծի շրջանակներում, որպես հիմնադրույթ, նախատեսվում է ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով կոյուղացնել համայնքի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների միջոցով:

Հեռացման ենթակա կոյուղու հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքերին:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գրեթե բոլոր բնակավայրերում, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որոնք կանցնեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք կամ կաթիլային ոռոգման համակարգ, ինչը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացմանը:

«Լոռի 8» տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում հոսքաջրերը ներծծվում են հողի մեջ կամ անկանոն առուների միջոցով հեռանում: Նման երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքերի համար նախատեսված է հեղեղատար ցանցի կառուցում՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Դիտարկվող միկրոռեգիոնի էլեկտրամատակարարումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Դեբետ» մասնաճյուղի կողմից: Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով: Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար: Գլխավոր փողոցներում անցկացվել է արտաքին լուսավորություն:

Ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ դիտարկվող տարածաշրջանի բոլոր բնակավայրերը գազաֆիկացված են: Բնակավայրերի տարածքում գազամատակարարումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ միջին և ցածր:

Տարածաշրջանի բնակավայրերի վարչական, հասարակական, ուսումնական, առողջապահական և արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական շենքերի ջերմամատակարարումն իրականացվում է ինչպես գազի վառարանների, այնպես էլ էլեկտրական տաքացուցիչների միջոցով: Գյուղական բնակավայրերի բնակչության որոշ մասը ջեռուցման նպատակով օգտագործում է փայտի կամ աթարի վառարաններ:

Ըստ ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ դիտարկվող տարածաշրջանի տարածքում բջջային կապն ապահովում են «ՄՏՍ Հայաստան» և «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությունները:

Տարածաշրջանի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է:

«Լոռի 8» տարածաշրջանի բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 639.49 հա: Բնակավայրերում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը 9 է: Հաճախակի են աղբի կուտակումները հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է բնակավայրերի սանիտարական վիճակի վատացմանը: Բնակչության թիվը կազմում է 4988 մարդ: Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 1206.5 տ/տարի:

Տարածաշրջանի համայնքներում տեղակայված է 27 գերեզմանոց՝ ընդհանուր 18.11 հա տարածքում, որտեղ սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերին համապատասխան: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Համաձայն նախագծի՝ գյուղական բնակավայրերում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդամենը կազմում են՝ 0.5 հա: Շինարարական նորմերի համաձայն գյուղական բնակավայրերում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ^2/մարդ, իսկ փոքր քաղաքների համար՝ 10 մ^2/մարդ:

«Լոռի 8» տարածաշրջանի համար կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ տարածաշրջանի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,

- ՀՀ պետական բյուջեով 2022-2023 թթ. և 2023թ. նախատեսվող պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրեր,
- կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացման, զբոսայգու կառուցման աշխատանքների ավարտին հասցման և բարեկարգման անհրաժեշտություն (բոլոր բնակավայրերում),
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցում և բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- կաթիլային ոռոգման համակարգի ներդրում,
- ջրամբարների կառուցում,
- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- բնակավայրերում հանգստյան գոտիների ստեղծում,
- բնակավայրերի տարածքում աղբահանման և տեսակավորման կազմակերպում,
- աղբահանությունը կատարվում է ամենօրյա և շաբաթական ռեժիմներով,
- նախատեսվում է Լոռու մարզում ներդնել աղբահանության ինտեգրված համակարգ՝տարածաշրջանային սանիտարական աղբավայրի և փոխաբեռնման կայանների կառուցմամբ, որը հնարավոր է սպասարկի 2 մարզ,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,
- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,
- անտառների հիմնման և ընդլայնման աշխատնաքների իրականացում,
- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
- անցնել լրիվ գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները՝ տարեկան 10.61 տ/տարի,
- անցնել աղբի տեսակավորման,
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ,
- ներբնակավայրային փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն,
- տուրիզմի զարգացում,
- գյուղատնտեսական հողերի բերրիության բարձրացմաննն ուղղված միջոցառումներ:

Ներկայումս բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՄՈՆՈԳՐԱՖԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով բնակավայրերում զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

«Լոռի 8» ՄՄՀՏՊՓ նախագծի գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն, ինչը թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաև տարածաշրջանի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափոնների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:

Ընդհանուր առմամբ «Լոռի 8» ՄՄՀՏՊՓ նախագծի համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Պատճառաբանական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Փորձաքննության բոլոր փուլերում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել հիմնադրութային փաստաթղթի վերաբերյալ:

«Լոռի 8» ՄՄՀՏՊՓ նախագծում ընդգրկված համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրութային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Միկրոռեգիոնում քաղաքաշինական հեռանկարային լուծումներն իրականացնելիս՝ բացառել անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Լոռի 8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան